30.07.2013

2008 թվականից Երեբունի ամրոցում իրականացվող պեղումների 6-րդ փուլն այսօր ամփոփեց Երեբունիի հայ-ֆրանսիական հնագիտական արշավախումբը: Պեղումների այս փուլի ավարտը նշանավորվեց ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր Անրի Ռոնոյի, Հնագիտական միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արև Սամուելյանի և Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանի այցով Երեբունի ամրոցի միջնաբերդ:

Արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին պեղումների հրապարակով, ունկնդրեցին արշավախմբերի ղեկավարներ Ստեֆան Դեշամպի /Ֆրանսիա/ և Աննա Ազիզյանի /Հայաստան/ մեկնաբանությունները և հիմնավորումները: Ֆրանսիական արշավախմբի ղեկավար Ստ. Դեշամպը, ներկայացնելով պեղումներով բացված ուրարտական փողոցը, կատակով նկատեց, որ բարձրաստիճան այցելուները այս պահին քայլում են Երևանի թերևս ամենահին փողոցով:

Տպավորիչ շրջայցին հետևեց արշավախմբերի մամուլի ասուլիսը, որին մասնակցեց նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը:

Հանդես գալով հակիրճ խոսքով՝ Երևանի փոխքաղաքապետ Արամ Սուքիասյանը վերահաստատեց Երեբունի ամրոցն այցելուին նորովի ներկայացնելու Երևանի քաղաքապետարանի կամքը:

Երեբունի ամրոցի պեղումների 6-րդ փուլը մեկնարկել է 2013թ. հուլիսի 2-ից: Առաջիկա ամսին պեղումների հրապարակը կծածկվի հողով՝ մինչ պեղումների 7-րդ փուլը: Հայ-ֆրանսիական համատեղ պեղումները Երեբունիում կշարունակվեն մինչև 2015 թվականը: